ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 14-Ա

«14» մարտի 2018 թվական

ՍԱՄՎԵԼ ՄԱՐՏԻՆԻ ԷԳՆԱՏՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 1.2-1/ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգի» 76 կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցույթային հանձնաժողովի 2018 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր՝ 1.2-1/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» եզրակացությունը և Սամվել Մարտինի Էգատոսյանի 2018 թվականի մարտի 14-ի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ

1. Սամվել Մարտինի Էգնատոսյանին 2018 թվականի մարտի 14-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր՝ 1.2-1/ պաշտոնում՝ նրան ազատելով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Գտաշեն բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնից:

2. Աշխատավարձը սահմանել ըստ սահմանված պաշտոնային դրույքաչափի:
3. Սամվել Մարտինի Էգնատոսյանի համար սահմանել փորձաշրջան երկու ամիս ժամկետով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«14» մարտի 2018 թվական
գյուղ Ամասիա